

GREEN  
CLIMATE  
FUND



Empowered lives.  
Resilient nations.

Կլիմայի փոփոխության հարմարվողականության  
ազգային ծրագիր՝ միջնաժամկետ և երկարաժամկետ  
հարմարվողականության առաջխաղացման համար Հայաստանում


ՄԱՉԾ-ԿԿ ծրագրի մեկնարկային սեմինար

Դիանա Հարությունյան

*ՄԱՉԾ կլիմայի փոփոխության ծրագրերի համակարգող*

«Անի» հյուրանոց, Երևան  
13 փետրվարի, 2018թ.

# Հարմարվողականության պլանավորման խնդիրները ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի շրջանակներում



**ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի ներքո Հայաստանի Հանրապետության ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողություններին/ ներդրումին» հավանություն տալու մասին (INDC)  
ՀՀ կառավարության արձանագրային որոշում N 41, 2015թ.**

- 3) Հարմարվողականության գործողությունները հիմնված են կլիմայի փոփոխությամբ պայմանավորված խոցելի ոլորտների վրա՝
- ա. բնական Էկոհամակարգերը (ջրային ու ցամաքային, այդ թվում անտառային Էկոհամակարգերն ու դրանց կենսաբազմազանությունը, հողային ծածկույթը),
  - բ. մարդու առողջությունը,
  - գ. ջրային տնտեսությունը,
  - դ. գյուղատնտեսությունը, այդ թվում ձկնաբուծությունն ու անտառային տնտեսությունը,
  - ե. Էներգետիկան
  - զ. բնակավայրերն ու ենթակառուցվածքները,
  - Է. զբոսաշրջությունը:

# ԿՓ հարմարվողականության ծրագրի համապատասխանությունը ազգային զարգացման համատեքստին և ռազմավարությունների

- Հայաստանի Հանրապետության Կառավարության Ծրագիր, 2019
- Կայուն Չարգացման Նպատակներ (SDGs)
- ՀՀ և ԵՄ միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր
- Աղետների ռիսկի կառավարման ազգային ռազմավարություն, և ծրագիր 2017
- Ազգային անվտանգության հայեցակարգ (2007)
- Պարենային անվտանգության ապահովման հայեցակարգ, և 2017-2021թթ. միջոցառումների ծրագիր
- 2016թ. ՀՀ կառավարության N49 արձանագրային որոշմամբ հաստատված ԿՓ կոնվենցիաների պարտավորությունների կատարման պլանով նախատեսված Է Հարմարվողականության ծրագրի մշակումը և կառավարության հաստատման ներկայացումը

# Հարմարվողականության գործողությունների մոնիտորինգի պահանջը

## ՄԱԿ-ի Վիճակագրության Բաժին (United Nations Statistics Division)

- Պահանջ կա ընդհանրացված կլիմայական վիճակագրության և ինդիկատորների ներդրման, 2020թ:
- Ընթանում է պիլոտային փուլը և խորհրդակցությունները զարգացող երկրների հետ, մասնավորապես ներառելու խոցելիության և հարմարվողականության ինդիկատորներ

## Կլիմայի փոփոխության կոնվենցիա (UNFCCC)

COP 21- ի որոշում՝ պետք է թափանցիկություն և մոնիտորինգ լինի, որպեսզի հասկանան և չափեն հարմարվողականության առաջընթացը

Փարիզյան համաձայնագրի 7-րդ հոդված՝ կողմերը պայմանավորվել են հարմարվողականության գործողությունների պլանավորման և իրականացման գործողությունների, մոնիտորինգ և գնահատում իրականացնել հաղորդակցությունների միջոցով, 2023:

## SUSTAINABLE DEVELOPMENT GOALS





## Կլիմայի Կանաչ Յիմնադրամ (ԿԿՅ)

**Նպատակ՝**

ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի ֆինանսական մեխանիզմն է

**Յիմնադրվել է՝**

2010թ. Կոնվենցիայի 1/CP16 որոշմամբ, սկսել է գործել 2015թ.

**Շահառուները՝**

194 Կոնվենցիայի Կողմ երկրները

**Կառավարումը՝**


Խորհուրդ + Քարտուղարություն + Անկախ գնահատողներ

**Նպատակը՝**

Չարգացող երկրներին տրամադրել ֆինանսական միջոցներ ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման և կլիմայի փոփոխությանը հարմարվելու գործողությունների համար (50%/50% հարաբերությամբ)

**Տեղակայված է՝**

Չարավային Կորեայի Ինչեոն քաղաքում




GREEN  
CLIMATE  
FUND

## Կլիմայի կանաչ հիմնադրամի Պատրաստվածության աջակցության ծրագիր

- **Նպատակն է՝** օգնել երկրներին զարգացնելու և ամրապնդելու կարողությունները մշակելու ազգային ծրագրեր, պլանավորելու հարմարվողականության շրջանակները, ձևակերպելու և հայցելու ֆինանսական միջոցներ Հիմնադրամից,
- Ամեն զարգացող երկրին առավելագույնը կարող է տրամադրվել մինչև 3 միլիոն ԱՄՆ դոլար
- Ֆինանսավորման հայտ կարող է ներկայացնել միայն Երկրի կողմից լիազորված գերատեսչությունը, որը և ապահովումը է երկրում ԿԿՀ գործունեության լայն ռազմավարական վերահսկողություն և երկրի ցածր արտանետումների և կլիմայական կայուն զարգացման առաջնահերթությունների մասին տեղեկացնում է ԿԿՀ-ին ֆինանսական աջակցություն ստանալու նպատակով:
- ՀԱԾ նախագծերի կազմման և իրականացման համար ԿԿՀ-ում հավատարմագրված են ՄԱԿ-ի Չարգացման ծրագիրը և ՄԱԿ-ի բնապահպանական ծրագիրը (UNDP/UN Environment)

# ՄԱԶԾ կողմից աջակցվող ՀԱԾ

- Latin America & Caribbean
- Africa
- Arab States
- Europe & CIS
- Asia & Pacific





# Հարմարվողականության պլանավորման նախագծերի ֆինանսավորումը և փուլերը

ԿՓ ազդեցության և խոցելիության գնահատում

Ռազմավարությունների և գործողությունների մշակում

Հիմնական շահառուների՝ կողմից գործողության կարևորում և ներդրումների տրամադրում

Հարմարվողականության ֆինանսավորման ռազմավարության և GCF ծրագրերի փաթեթի մշակում


# Հայաստանի խոցելիությունը կլիմայի փոփոխությունից

## Ըստ կոնվենցիայի՝ «....., խոցելի լեռնային էկոհամակարգերով» երկրները


- Հայաստանի տնտեսության և էկոհամակարգերի խոցելիության և հարմարվողականության խնդիրները առաջին անգամ գնահատվել և ներկայացվել են Կոնվենցիային Հայաստանի առաջին ազգային հաղորդագրության մեջ՝ 1998թ., հետագայում այդ գնահատումները լրացվել են 2-րդ (2010 թ.) և 3-րդ (2015թ.) հաղորդագրություններում,
- Մշակվել են նաև կանխատեսումային սցենարներ 2030, 2070, 2100թթ. Համար
- Կատարվել են նաև առանձին մանրամասնեցված ուսումնասիրություններ:

# ՀՀ –ում իրականացված խոցելիության գնահատումներ

- Եղանակային, կլիմայական և հիդրոլոգիական ծառայությունների արդիականացման ճանապարհային քարտեզ, 2018
- Բարաբափության աղետների և ռիսկերի գնահատում, 2018
- Գյուղատնտեսության սեկտորի խոցելիություն, 2014
- Կլիմայական ռիսկերի մեղմման մասով Հայաստանում գյուղատնտեսական ապահովագրության ներդրման կարիքների գնահատում, 2014
- Կլիմայական ռիսկերի կառավարում, 2013
- Վայոց ձորի մարզի խոցելիությունը կլիմայի փոփոխությունից և հարմարվողականության միջոցառումների պլանը, 2014
- ՀՀ ջրային ռեսուրսների խոցելիությունը կլիմայի փոփոխության ազդեցության ներքո, 2009
- Կլիմայի փոփոխության սոցիալ-տնտեսական ազդեցության գնահատում, 2009
- Մարմարիկ գետավազանի ջրային ռեսուրսների վրա կլիմայի փոփոխության ազդեցության համալիր գնահատում




# ՀՀ-ում միջին տարեկան ջերմաստիճանի (1929-2016թթ.) և տեղումների (1935-2016թթ.) շեղումները




Միջին տարեկան տեղումների նվազում մոտ 9%

Միջին տարեկան ջերմաստիճանի աճ՝ 1.23 °C



# Հայաստանի գետային հոսքի կանխատեսվող փոփոխությունները 2030թ., 2070թ. և 2100թ.




Տարի	Հոսքը, մլն մ <sup>3</sup>	Հոսքի փոփոխությունը	
		մլն մ <sup>3</sup>	%
1961-1990	5,797.0	0	0
2030	5,141.6	-655.3	-11.6
2070	4,405.6	-1,391.5	-24.9
2100	3,602.2	-2,195.0	-39.8

## Գյուղատնտեսության խոցելիությունը

- Ագրոկլիմայական գոտիների տեղաշարժ 200-400 մ մինչև 2100թ.,
- Մշակաբույսերի բերքատվության նվազեցում կապված ջերմաստիճանի բարձրացման, տեղումների քանակի նվազեցման և հողի մակերեսից գոլորշիացման աճի հետ,
- ՀՎԵ-ների բացասական ազդեցության բարձրացում՝ կապված դրանց ակնկալվող հաճախականության և ուժգնության բարձրացման հետ,
- Ոռոգելի հողերի գոտու ընդլայնում և ոռոգման հավելյալ ջրի անհրաժեշտություն,
- Հողերի, ինչպես նաև բնական արոտավայրերի դեգրադացիայի ուժեղացում
- Գյուղատնտեսական հողերի վիճակի վատացում և արդյունավետության նվազեցում
- Բույսերի և կենդանիների հիվանդությունների ու վնասատուների տարածում

# Գյուղատնտեսության խոցելիությունը ՀՎԵ-ների նկատմամբ , ըստ մարզերի



Տարի	Հասցված վնասը, մլրդ դրամ
1995	17.00
1996	12.59
1997	26.53
1998	14.95
1999	11.33
2000	59.78
2001	23.94
2002	15.14
2003	82.63
2009	11.89
2010	35.50
2011	0.91
2012	0.49
2013	23.92
	<b>336.6</b>

# Բնակավայրերի և ենթակառուցվածքների խոցելիությունը

Հայաստանի տարածքի կեսից ավելին, հատկապես միջին բարձրադիր լեռնային շրջանները, ենթակա է սելավների:


Հանրապետության տարածքում սելավային երևույթների մեծ մասը կապված է լեռնային ռելիեֆի և տեղատարափ անձրևների, կարկուտի, հազվադեպ ձնհալքի հետ և առավելագույն քանակությունը՝ շուրջ 80%-ը արձանագրվել է մայիս-հունիս ամիսներին: (4ԱՀ)



2016թ. հունիս ամսին Շիրակի մարզի Արթիկ համայնքում դիտվող սելավային հոսքը



# Կլիմայի փոփոխությունը և աղետների ռիսկերի կառավարումը



# ՀԱԾ գործընթացը

**Ինտեգրացված մոտեցում:** ՀԱԾ գործընթացը պետք է ներառվի ազգային զարգացման պլանավորման, քաղաքականության և ծրագրերի մեջ.

**Լուծումները պետք է լինեն հարմարեցված երկրի համատեքստին:** Ամեն երկիր պետք է մշակի իր երկրի իրավիճակին համապատասխան ՀԱԾ

**Շարունակականություն:** Միջնաժամկետ և երկարաժամկետ հարմարվողականությունը, վերանայվող, շարունակական գործընթաց է, ոչ թե մեկանգամյա գործողություն

ՀԱԾ մշակումը պետք է հենված լինի տվյալների և հիմնավոր ուսումնասիրությունների վրա, հաշվի առնի լավագույն գործելակերպերը և ավանդական գիտելիքը և հաշվի առնի Կոնվենցիայի պահանջները

# Չարգացած երկրների փորձը՝ ՀԱԾ կառուցվածքը և տարրերը

- **ԱՄՆ** –նիտարկում են հարմարվողականությունը, որպես բնապահպանական գործակալության գործառույթ (EPA) շրջակա միջավայրի պահպանության համատեքստում
- **Կանադա**- հիմնականում համայնքերի գործառույթ, տալով նրանց ուղղորդում
- **Ավստրալիա** – 6 ուղենիշային սկզբունքներ (**բաշխված պատասխանատվություն**, տվյալների վրա հենված ռիսկի կառավարում, ԿՓ գործոնը պետք է ներառված լինի որոշումների մեջ, արժեքահեն այլընտրանքների ընտրություն, աջակցություն խոցելի խմբերին, որոշումների պարբերական վերանայում)
- **Մեծ Բրիտանիա** – հիմնված է Ռիսկերի գնահատման վրա, որը պետք է վերանայվի ամեն 5 տարին մեկ, գործողությունների ծրագրում հստակեցված են պատասխանատու մարմինները
- **Իռլանդիա** - Նախատեսված է մշակել ազգային շրջանակներ, և մեկ տարվա կտրվածքով առաջարկել տեղական իշխանություններին մշակել իրենց պլանները
- **Գերմանիա** – շրջանակների մշակում ֆեդերալ մակարդակում և Գործողությունների պլանի հաստատում (2011) , որը առանձին սեկտորների համար ունի համապատասխան բաժիններ, իրականացումը հսկվում է 105 ինդիկատորներով

# Հայաստանյան ՀԱԾ ծրագրի նախապատմությունը

- 2016թ. հունիսին Բնապահպանության նախարարությունը մեկնարկել է Ազգային հարմարվողականության ծրագրի (ՀԱԾ) նախապատրաստական աշխատանքները:
- ՀԱԾ իրականացման նախնական գործողությունների ծրագիրը ձևակերպվել և հաստատվել է առանցքային ոլորտների ներկայացուցիչների և բնապահպանության նախարարության կողմից:
- 2017թ. հունվարին ՄԱԶԾ Հայաստանի գրասենյակը շահագրգիռ կողմերի հետ համաձայնեցված մշակել է Ծրագրի գաղափարի նկարագրությունը և այն ներկայացվել է Բնապահպանության նախարարության համաձայնեցմանը,
- 2017թ. փետրվարին Բնապահպանության նախարարի «Առարկություն չունենալու» նամակով այն ներկայացվել է ԿԿՀ հաստատմանը,
- 2018թ. հունիսին ԿԿՀ-ն պաշտոնապես հաստատել է Ծրագիրը:
- 2018թ. նոյեմբերի 27 ստորագրվել է ծրագրի փաստաթուղթը

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

---

**[www.nature-ic.am](http://www.nature-ic.am)**

Դիանա Հարությունյան  
*diana.harutunyan@undp.org*